



“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՐ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 46.

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1881

ԹԻՒ 7



ՅՈՂՀԱՆՆԷՍ ՀՈՒՍ ՄԱՐՏԻՐՈՍԸ

Մեր ընթերցողներէն ոմանք կարգացած և լսած ըլլալու են այն մեծ բարեկարգութեան վրայ որ եղաւ Մարտինոս Լուծերի օրերը: Յերես հարցուի թէ չկայի՞ն արդեօք նախ քան զԼուծեր մարդիկ որ տեսան թէ եկեղեցւոյ մէջ մտրութիւններ կային և ջանացին վերցնել զանոնք: Այո՛, կային շատ մարդիկ, որ ունեցան այս

գաղափարը: Այս մարդերէն մին էր Յովհաննէս Աւիլիֆ Անդրիոյ մէջ Օքսֆորտի համալսարանի ուսուցիչներէն մին: Այս անձն ապրեցաւ 1324 էն մինչև 1384, և թարգմանեց բոլոր Աստուածաշունչն Անգղիերէնի, և մինչև իւր մահուան օրը քարոզեց եկեղեցւոյ մտրութեանց դէմ: Այն առանձին Եւրոպոյի համալսարանաց մէջ կային շատ ուսանողներ որ սովոր էին

մէկ համալսարանէ միւսն երթալ հոչակաւոր ուսուցչաց դասախօսութիւնները լսելու համար: Պահեմիոյ Բրակա քաղաքին համալսարանէն Յերոնիմոս անուն անձ մը Օքսֆորտ եկաւ, և ծանօթացաւ Աւիլիֆի ուսուցած վարդապետութեանց: Յերոնիմոս այն վարդապետութիւնները տարաւ ի Բրակա, և այն տեղի համալսարանին մէջ շատեր ընդունեցան զանոնք: Այս վար-

դատարաններն ընդունող ուսանողներէն մին էր Յովհաննէս Հուս որ ծնած էր 1377 ին հարաւային Պոհնմիոյ մէկ գիւղին մէջ : Յովհաննէս Հուս եղաւ եռանդուն քարոզիչ Աւետարանի, և խստիւ կը դատապարտէր ներողութեան թողութեան վաճառումն : Պապերը սովոր էին մեղաց թողութիւն վաճառել ստակով, և այս առևտուրը շատ հասարակ էր Հուսի և լուծերի օրերը : Հուսի և անոր ընկերաց քարոզութիւնը մեծ բարեկարգութիւն մը յառաջ բերած էր ի Պոհնմիա, և այս պատճառաւ Հուս 1414 ին կանչուեցաւ եկեղեցական ժողովոյ մ'առջև որ գումարուած էր Զուիցերայի կողմանէի քաղաքը երկու հակառակորդ պապերու վէճը լինցնելու, նաև Ռիքլիֆի վարդապետութիւնները դատապարտելու համար : Ռիքլիֆ երեսուն տարի առաջ մեռած էր, բայց ժողովը դատապարտեց անոր վարդապետութիւնն իբրև հերետիկոսութիւն, և վճռեց որ Ռիքլիֆի ոսկրները դուրս հանուին գերեզմանէն ուր կը հանգչէին և սղբանոցը նետուին : Հուս Գերմանիոյ կայսերէն խոստում ընդունած էր ապահովութեամբ երթալ ի ժողով և ետ դառնալ, բայց կայսրը վատաբար խաբեց զնա : Հուս համարձակութեամբ պաշտպանեց իւր վարդապետութիւնները ժողովոյ առջև, սակայն իբրև հերետիկոս դատապարտուեցաւ այրուելու : Յովհաննէս զիցաղնական արութեամբ պատրաստուեցաւ մահուան : Առանց դոյզն մեղքանդութեան, հանդարտութեամբ մինչև իսկ ուրախութեամբ զնաց մահուան տեղը : Երբ հոն հասաւ, ի ծոնը իջաւ, և սկսաւ ըսել քանի մը սարմաններ որ ապաշխարութեան զղացում կը յայտնեն, և համառօտ ու շքանշանագ աղօթքներ ընել : Զայն ծագրելու համար անոր գլուխը դրին թղթեայ երկար թագ մը որուն վրայ դեղեր նկարուած էին : Երբ Հուս աղօթքի ատեն գլուխը վեր վերցուց, թագը վար ինկաւ, և զինուոր մը թագը գեանէն առաւ և անոր գլուխը դրաւ ըսելով անոր, « Այրուելու ես գիւաց հետ զորս պաշտած ես : » Երբ Հուս մտաւ շղթայով մը վիզէն կապուեցաւ, ըսաւ, « Յօժարութեամբ կը կրեմ այս շղթայն Յիսուսի սիրոյն համար որ աւելի ծանր շղթաներ կրեց : » Մինչ կ'այրէր խարուկին մէջ, կը լըսուէր անոր ձայնը որ կ'ըսէր. « Յիսուս, Որդի Աստուծոյ կենդանոյ, զթախն : » Եւ ձայնը դադարեցն ետքնալ,

դեռ անոր շուրթները կը շարժէին մինչև ցվերջին շունչ :
 Երբ այս յօդուածագիրը երկու տարի առաջ Զուիցերայէն կ'անցնէր, այցելեց կողմանէի քաղաքը : Գնաց բուն այն շէնքն ուր նիստ ըրած էր ժողովը որ դատապարտեց զՀուս : Ժողովոյ ատենագրութիւններն որ մագաղաթի վրայ գրուած են, կը պահուին մտուկի մէջ որոյ կափարիչն ապակեայ է : Այս ատենագրութեանց մէջ թերթի մը լուսանցքին վրայ կայ պատկեր մը որ կը ցուցնէ զՀուս այնպէս ինչպէս կ'երևէր երբ վերոյիշեալ թղթեայ թագն ի գլուխ կը տարուէր այրուելու : Յօդուածագիրը գնաց տեսնելու նաև այն տեղն ուր մարտիրոս եղաւ Հուս : Այս տեղը քիչ մը հեռու է քաղքէն, և այն ժայռն ուրոյ մօտ էր խարուկը, հիմա շրջապատեալ է գեղեցիկ երկաթեայ վանդակով մը, և հոն քարի մը վրայ կայ արձանագրութիւն մը որ կ'ըսէ այցելուաց թէ այն է տեղին ուր այրուեցաւ Հուս 1413, յուլիս 6 ին :
 Շնորհակալ ենք Աստուծոյ որ կրօնական ազատութիւնն, այսինքն կրօնական կարծեաց համար մարդոց քաղաքական իշխանութեան պատասխանատու չըլլալու աղատութիւնը, հիմա այնպէս ընդհանուր ընդունուած է որ աշխարհ շատ պիտի զարմանայ եթէ լսէ թէ Եւրոպայի մէջ մարդ մը իւր կրօնական կարծեաց համար մահուան դատապարտուած է : Աստուած իւր պատուական խօսքը տուած է բոլոր մարդոց, և իւր Որդին տուած է Փրկիչ ըլլալու այն ամէն մարդոց որ կ'ընդունին զնա, կը հաւատան անոր և կ'երթան անոր ետեւէն : Բայց եթէ մարդ մը կը մերժէ Աստուծոյ խօսքն և Փրկիչը, պատասխանատու չէ ուրիշ մարդոց կամ մարդկային կառավարութեան, այլ իրեն համար հաշիւ պիտի տայ Աստուծոյ, և միայն Աստուծոյ :
 —————
 ԱՅՍ ԶԵՁԻ ՀԱՄԱՐ Է
 Սիրելի տղայք, թերևս կը յիշէք թէ անգամ մը երբ Գառիթ մեծ մեղք մը գործեց, Աստուած Նաթան մարդարէն զրկեց զանի յանդիմանելու համար : Նաթան մարդարէն առակաւ խօսեցաւ Գառիթի, և ըսաւ թէ հարուստ մարդ մը յափշտակած էր աղքատի մը գառը : Թագաւորը շատ զայրացաւ և կ'ուզէր պատժել հարուստ մարդը, բայց մարդարէն կեցուց զնա ըսելով, « Դուն ես այն

մարդը, » և բացատրեց թէ Գառիթ աւելի մեծ չարութիւն գործած էր քան առակին մէջ յիշուած հարուստ մարդը : Անտան Գառիթ տեսաւ իւր մեղքը, խոստովանեցաւ զայն Աստուծոյ առջև և զղջաց, և Աստուած ներեց անոր :
 Արդ, սիրելի տղայք, սա կ'ուզեմ հասկցնել ձեզ թէ աղէկ պատմութիւնները զոր կը կարդայք Աւետարանի մէջ, աղէկ դասերը զոր կը սորվիք կիրակնօրեայ դպրոցներու մէջ, կամ աղէկ բաները զոր կը լսէք ձեր երէցին քարոզներէն, օգուտ չեն ըներ ձեզ մինչև որ զանոնք չընդունիք ձեր սրտին մէջ : Պէտք է որ այն բարի և ուղիղ բաները զոր կը լսէք, ձեզի համար հասկնաք :
 Այս յօդուածին վերնագիրն որ ուղղուած է : Ռ'չ ապաքէն կարապետին կամ Մարիամին որ կը կարգայ զայն : Այն վերնագիրը եղբորդ Սարգիսին կամ քրոջդ Վարդուհիին, կամ հօրեղբորդուդ Արսէնին կամ Աննային ուղղուած չէ, այլ « Եւ ուղղուած է : Աղէկ է առատաձեռն ըլլալ, բայց կրնաս այնչափ առատաձեռն ըլլալ որ քեզի համար հարկաւոր եղած օգտակար և բարի դասերն այլոց տաս, և դուն անմասն մնաս : Երբ քարոզիչը կը քարոզէ եկեղեցւոյ մէջ, « Եւ կ'ակնարկէ և ոչ աղջիկը կամ տղան որ քու քով կը նստի : Կիրակնօրեայ դպրոցի վարժապետդ « Եւ կ'ակնարկէ ինչ որ կ'ըսէ դասին մէջ : Տղայոց Աւետարները « Եւ կ'ուզէ իւր խօսքը, և ոչ միւս քանի մը հարիւր ընթերցողներուն : Նա մանաւանդ Աստուած « Եւ կ'ակնարկէ, երբ կ'ըսէ, « Որդեակ, սիրտդ ինձի տուր : »
 Կը փափաքիմ նախ քան զամենայն որ ամէն տղայ որ կը կարգայ այս թերթը, լսէ Աստուծոյ ձայնին որ զնա կը կանչէ : Բայց ամէն ոք իրեն համար ընելու է զայս : Թերևս ծնողքը շատ եռանդեամբ կ'աղօթեն քեզի համար : Բայց անոնք չեն կրնար քու տեղը զղջալ : Անոնք չեն կրնար տալ քու սիրտդ Աստուծոյ : Դուն քեզի համար զղջալու ես, դուն քու սիրտդ տալու ես Քրիստոսի : Պիտի ընե՞ս խնդիրն այս է :
 Ռ'չ, որչափ երջանիկ պիտի ըլլաս, սիրելի զատակ, եթէ սիրելի Փրկիչը քեզի Փրկիչ ընդունիս : Նա կ'ուզէ որ դուն իրեն տղան ըլլաս : Քու սիրտդ անոր տալու համար ասկէ աւելի յարմար և աղէկ ժամանակ երբ պիտի ունենաս : Գիտցած եղի որ որչափ ուշանաս այնչափ գէշ կ'ըլլայ : Կամայ կամայ շարժելով որ մ'ալ պիտի տեսնես որ ժամանակն անցած է :
 —————

ՄՈՒՐԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՄԵՆԵՆ ԱՂԷԿ ԴՈՒՐ

Երկու մուրացիան օր մը իրարու հանդիպեցան, և ճամբուն վրայ նրա տեղով սկսան այդպէս խօսակցիլ:

“Մեր արուեստը շատ խեղճ արուեստ է. հետզհետէ կը ձանձրանամ այս գործէն:”

“Ո՛հ, իրաւ կը ձանձրանաս այս գործէն. ես ձանձրացած չեմ: Մուրացիանութիւնը շատ յաջող գործ մը կը գտնեմ, և հետզհետէ աւելի կը սիրեմ այս գործը:”

“Չարմանալի՛ բան: Այնչափ արգելքներ կան մեր յաջողութեան դէմ: Նոսի, մարդ չհամարձակիր յաճախ երթալ միևնոյն անձին:”

“Ես այնպէս չեմ գտներ: Որչափ յաճախ կ'երթամ, այնչափ դիւրութեամբ կ'ընդունին սպորմութիւն:”

“Իրաւ, այդպէս է: Ընդհակառակն ես ուր որ երթամ, կը վաճառուիմ ‘ծոյլ, անպիտան’ կոչուելով. կամ ուրիշ ասոր նման նախատական անուններով: Քիչ մը հաց կամ սաակ ձեռք ձգելու համար շատ մը մարդոց դուռը կը զարնեմ:”

“Ճշմարիտ կ'ըսեմ որ եթէ խնդրածքս չառնեմ, միշտ կ'առնեմ լաւագոյն բան մը:”

“Շատ բախտաւոր մարդ ես, մաւնաւոր այսպիսի ժամանակի մը մէջ յորում մարդիկ իրենց դուրսը շարժելով կ'ըսեն թէ իրենք ալ մուրալու վիճակի կը հասնին:”

“Ես այսպիսի խօսք բնաւ չեմ լրսեր: Կ'երթամ նաև ուր գիտեմ թէ մեծ հարստութիւն կայ, և բոլոր խնդրողներուն բաւական կայ, և աւելին կայ:”

“Եթէ ես տխուր և խեղճ կերպարանքով դիմեմ, մարդիկ զիս կեղծաւոր կը կոչեն. իսկ եթէ ուրախ և զուարթ գէպով երթամ, կ'ըսեն թէ օգնութեան կարօտ չեմ: Չգիտեմ թէ ինչ բնեւոր եմ յաջողելու համար:”

“Ես այնպէս չեմ. երբ նեղութեան մէջ եմ, ցաւակցութիւն կը գտնեմ, և երբ ուրախ և գոհ եմ, աւելի մեծ բարեբաններ կը վայելեմ:”

“Այս զարմանալի է: Երբ ես կը սկսեմ վիճակս պատմել մարդոց, խօսքիս կէտը դեռ չլրացած կ'ըսեն թէ սուտ է, և եթէ ստոյգ ըլլալն իսկ գիտնան, շատ հոգ չեն ըներ:”

“Որչափ տարբեր է իմ վիճակս: Վիշտերս և նեղութիւններս որչափ յաճախ պատմեմ, լսող կայ: Ինձ կ'ըսուի որ ամէն մէկ վիշտովս և նեղութեամբս երթամ. և աւելի զարմանալին սա է որ այնչափ մեծ կարեկցութիւն ունին վրաս որ իմ պէտքերս ինչ աւելի աղէկ կը ձանձրան այն տեղ ուր ես կը մուրամ:”

“Իսկ ուրեմն ինձ, դուն մ'ը կը մուրամ:”

“Երեւոյ ԳՐԻԳՐԷ: Իսկ դուն մ'ը կը մուրամ:”

“Ո՛հ, ես աշխարհէն կը մուրամ:”

“Ազա ուրեմն, զարմանալի չէ որ գործէդ ձանձրացած ես: Եկ, փորձէ մուրալ նաև այն գրան առջև ուր ես կը մուրամ: Եթէ այն դուռն երթաս, երբէք ձեռնունայն ետ չես դառնար:”

Թագաւորը տղուն գրպանէն դուրս ելած նամակ մը տեսնելով հետաքրքիր եղաւ զայն առնուլ կարդալու: Ուրիշի նամակ կարդալ ինչպէս ամէն մարդու նոյնպէս և թագաւորին համար պատուաւոր գործ չէր: Սակայն տղայն թագաւորին հետաքրքրութեան վախնալու կամ ամհնալու պատճառ չունէր, զի այն նամակն էր խեղճ մծրակէն որ շնորհակալութիւն կը յայտնէր իւր որդւոյն, վասնզի մծրը կը



ԹԱԳԱՎՈՐՆ ԵՒ ՍԵՆՆԿԱՊԱՆ ՏՂԱՆ
Գեղեցիկ բան մը կը պատմուի Բրուսիոյ Մեծն Փրեաներիկոս անուն թագաւորին վրայ: Մեղամ մը երբ թագաւորը զանգակը զարկաւ սենեկապան տղան կանչելու համար, պատասխան տուող չեղաւ: Թագաւորը նորէն զանգակը զարկաւ, և դարձեալ պատասխան տուող չեղաւ: Ասոր վրայ թագաւորը դուրսի սենեակն ելելով տեսաւ որ սենեկապան տղան խոր քնոյ մէջ ընկզմած էր: Տղան չարթնցաւ թագաւորին ոտքի ձայնէն:

զրկէր ամուսկաններն, և մայրը կ'ազօթէր Աստուծոյ վարձատրել զիս աւնոր որդիական ազնիւ զգացմանց համար: Թագաւորը նամակը կարդալէն ետքը կամայ մը սենեակ զարձաւ, և ստակի քսակ մ'առնելով եկաւ նորէն դուրս, և նամակին հետ մէկտեղ դրաւ տղուն գրպանը: Յետոյ նորէն սենեակն երթալով այնպէս ուժգին զարկաւ զանգակը որ տղան արթննալով անմիջապէս վազեց և եկաւ ներս: “Շատ խոր քնոյ մէջ ընկզմած էիր,” ըսաւ թագաւորը տղուն:

Տղայն վախնալով և շփոթելով ձեռքը դրապանը դրաւ և ստակի քսակ մը գտաւ : Քսակը դուրս հանեց, և թաղաւորին երեսը նայելով սկսաւ լալ :

Թաղաւորը հարցուց, «Ի՞նչ է այն ինչն և կու լաս :»

«Ո՛հ, տէր,» պատասխանեց խեղճ տղայն Փրեղերիկոսի առջև ծունկի դալով, «մէկը կ'ուզէ զիս կործանել : Բնաւ բան մը չեմ գիտեր այս ստակին վրայով զոր հիմա գտայ գըրպանիս մէջ :»

«Մանուկ բարեկամս,» ըսաւ թաղաւորը, «Աստուած այլևայլ միջոցներ ձեռք կ'առնու մեզ օգնելու համար : Այդ ստակը զրկէ մօրդ : Ինչ բարե գրէ անոր, և ըսէ որ ես պիտի խնամեմ թէ զինքն և թէ զքեզ :»

ԱՐԵՂԱԿՆ

Եթէ երկաթուղոյ մը կառուցումը սկսէր այսօր երթալ դէպ արեգակը, ժամը 35 մըն առնելով՝ իբր 300 տարուան մէջ կը հասնէր հոն : Երբ ուղեւորք ելլէին դուրս, պիտի գտնէին զիրենք այնպիսի գունտի մը վրայ որ 120,000 անգամ աւելի մեծ է քան մեր երկրագունդը :

Այս ահազին մարմինը մեր դրութեան մարտակներուն իշխանն է : Մեր բոլոր լոյսը և ջերմութիւնն անկէ են : Եթէ արեգակը չըլլար, չէինք կրնար ապրիլ : Եթէ աշխարհ մութի մէջ ըլլար, կանաչագեղ գառներ, և զուարթ գունով ծաղիկներ կը թառամէին մութ և խոնար աեղեր պահուած տունկերու նման :

Արտորայք կու տան մեզ առատ արմոխք, հացի համար ցորեն, յարդ և դարի մեր ձիերուն համար արեգա-

ռէ թէ երկիրս այլ արեգակն է կեդրոն, և ուրիշ աստեղագէտք յետոյ հաստատեցին այս կարծիքը :

Իբր 300 տարի յառաջ, յետ դիւտի դիտակին որ այսպէս կոչուած է քանդի հեռուն կը ցուցնէ, մարդիկ սկսան քննել արեգական երեսը, և գտան որ անոր երեսը հարթ և ողորկ չէ, այլ կազմուած է բոցի խաւերէ որոց մէջէն կ'երեւին այլակերպ բիծեր որ միշտ կը փոխուին : Կը կարծուի թէ այս բիծերն են արեգական բուն մակերևոյթը, որ անոր բոցեղէն խաւերուն մէջէն կը տեսնուի մեզ մթազոյն իբրև բիծ : Եթէ այս կարծիքն ուղիղ է, հաւանական չի թուիր թէ կենդանի արարածներ կան անոր վրայ : Գիտակով կը նշմարուին արեգական մակերևութին վրայ ահազին հրեղէն ամպեր որ իբր թէ փոթորիկներէ կը մղուին : Բացի դիտակէն ուրիշ գործիք մ'ալ կայ որ արեգական վրայ տեղեկութիւն կու տայ մեզ : Այս գործիքն է յատուկ ձեռով ապակի մը հաստուածակողմ անուն, որոց մէջէն անցնելով արեգական ճառագայթները կը բաժնուին այլևայլ գոյներու : Այս գոյներէն ոմանք կը տեսնուին ծիածանին վրայ, և կամ պատի մը վրայ, ուր արևին ճառագայթներն ապակիէ մը անցնելով կը ծագին : Գիտուն մարդիկ գտած են որ այն գոյներուն իւրաքանչիւրը կը նշանակէ թէ արեգական մէջ կան այլևայլ բնական նիւթեր, ինչպէս ջրածին կազ և այլն : Այսպէս կրնայ փոքր ի շատէ գիտցուիլ թէ ինչ նիւթերէ կը բաղկանայ արեգակը, թէպէտ 91,000,000 մընու հեռու է մենէ :



ՅՈՎԻ ԿՐԱՅ

Այս անասուններէն ոմանք շատ կը մեծնան և կու գան մինչև 500 քաշ : Ոմանք նաև կ'ուտուին : Երբ կրան կու գայ ծովեզրը կերակուր փնտռել և կամ իւր ձուերն ածել աւազին մէջ, որտեղը կու գայ, կը դարձունէ զնա կռնակին վրայ, և թշուառ անասունը չի կրնար դառնալ որովայնին վրայ, և այնպէս կը մնայ անշարժ :

Կրայք կը գտնուին մեծ բազմութեամբ Տարիէնի պարանոցը, ուր Սուէզի ջրանցքը շինող Մր. Լէսէթս հիմա կը պատրաստուի բանալ նաւերու համար ջրանցք, այնպէս որ նաւեր կարող ըլլան Ալքանդեան ովկիանոսէն երթալ Խաղաղական ովկիանոս՝ առանց դառնալու չորն կուչուած գլուխը :

կան կենարար ազդեցութեամբ, քան զի արեգակն է որ կու տայ երկրի լոյս և ջերմութիւն, նաև զովարար անձրեւներ զոր իբրև շոգի կը ծծէ կ'առնու ծովակներէ և գետերէ : Արեգակն է որ կը բերէ եղանակաց հեշտալի փոփոխութիւնները : Բայց բոլոր լոյսն և ջերմութիւնը զոր կը թափէ արեգակն երկրիս վրայ՝ հազիւ երկու հազար միլիոներորդ (2,000,000,000) մասն, և այն լուսոյ և ջերմութեան զոր կ'արձակէ արեգակն ուրիշ մարտակաց վրայ : Շատերը ժամանակաւ կը կարծէին թէ երկիրս պարապ գնդակի մէջ էր, և աստեղք լուսոյ ճառագայթներ էին որ այն գնդակին պատառուածներէն ներս կը ծագէին : Ոմանք ալ կը կարծէին թէ երկիրս կեդրոն էր տիեզերաց, և արեգակը, լուսին և աստեղք կը դառնային մեր բոլորտիքը : Բայց կողեւնիկուս անուն մարդ մը իմացուց թէ

ԱՒԵՏԱՐԵՐՆԵՐՈՒ ԳԻՆՆԵՐԸ

ԱՄՄԱԿԱՆ (Հայերէն, Հյ. Թ. ԷրւՄ Տաճիւրէն և Պալատիւրէն), փոսթայի ծախքով, տարին ¼ մէճիտիյէ :

ՇԱՐԱԹԱԿԱՆ (Հայերէն, Հյ. և Թ. ԷրւՄ Տաճիւրէն) փոսթայի ծախքով, տարին 1 ½ արծաթ մէճիտ : 10 առ 100 զեղչ կ'ըլլայ անոնց որ 100 դահեկանի կամ աւելի լրագիր կ'ազատարեն, եթէ լրագիրք մէկ անձի ուղղուին :

Ամբիկայի Միտիոնարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր ձ. Գ. Կրիս
Ֆիլիանդըլար Էօգուշու, Ամբիկան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ
ՏԳՈՒՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՍՈՒ ՊՅՅԱՅԱՆ